

**Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային
անվտանգության ծրագրեր»- ի համար \$S 2020`
«Իջևան քաղաքում թափոնների կառավարման կարողությունները
բարելավելու համար աղբարկղերով և հավաքող մեքենայով ապահովման»
ծրագրի ավարտի արարողությունը**

2021 թվականի սեպտեմբերի 23-ին Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի դրամաշնորհային աջակցության շրջանակում Իջևան քաղաքում տեղի ունեցավ 76,960 ԱՄՆ դոլար արժողությամբ «Իջևան քաղաքում թափոնների կառավարման կարողությունները բարելավելու համար աղբարկղերով և հավաքող մեքենայով ապահովման» դրամաշնորհային ծրագրի ավարտի արարողությունը: Արարողությանը ներկա էին ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Մասանորի Ֆուկուշիման, Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը, Իջևան քաղաքի քաղաքապետի պաշտոնակատար Արթուր Ճաղարյանը, Հայկական Կարմիր խաչի ընկերության ՀԿ գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյանը, գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչներ, կամավորներ և այլք:

Տրամադրելով 240 աղբարկղեր և աղբատար մեքենա՝ ծրագիրը նպատակ ունի ապահովել Իջևան քաղաքի թափոնների կառավարման պատշաճ համակարգ: Նոր տեղադրված աղբամանները և գնված աղբահան մեքենան կբարելավեն ավելի քան 19,000 բնակիչ ունեցող Իջևան քաղաքի թափոնների կառավարումը: Ծրագրի շրջանակներում կազմակերպվեցին շրջակա միջավայրի պահպանմանը նվիրված միջոցառումներ՝ բնակիչների շրջանում բարձրացնելու համար բնապահպանական իրազեկվածությունը և նպաստելու պինդ թափոնների կառավարմանը: Արդյունքում, ակնկալվում է նաև, որ թափոնների հեռացման և վերացման պատշաճ գործընթացը կբարելավի Աղստև գետի ջրի որակը՝ դրանով իսկ նպաստելով Հայաստանի բնապահպանական անվտանգությանը, որը համահունչ է ՀՀ կառավարության առաջնահերթություններին և Ճապոնիայի քաղաքականությանը ու համագործակցությանը Հայաստանի զարգացման գործում:

Բացման խոսքում, ջերմորեն ողջունելով հյուրերին, տիկին Եղիազարյանը իր երախտագիտությունը հայտնեց Ճապոնիայի կառավարությանը ու Հայաստանում Ճապոնիայի դեսպանությանը՝ ներդրման և վստահության համար, և նշեց, որ այս ծրագիրը ոչ միայն նպաստում է Իջևանում թափոնների կառավարման բարելավմանը, այլև բարելավում է շրջակա միջավայրի կառավարման համակարգը, որը աղետների ռիսկի նվազեցման կարևոր բաղադրիչներից է և, հետևաբար, տանում է կայուն զարգացման:

Դեսպան Ֆուկուշիման իր հերթին ընդգծեց, որ Ճապոնիան գնահատում է ենթակառուցվածքների բարելավումը տնտեսական աճի և տարածաշրջանային զարգացման համար: Հետևաբար, այս օգնությունը մեկն է այն քայլերից, որոնք ուղղված են շարունակական ջանքերին՝ մեր աշխարհը ավելի կայուն զարգացման ուղու վրա հիմնարար մակարդակով դնելու համար: Դեսպան Ֆուկուշիման նաև ընդգծեց, որ այս օգնությունը կդառնա ամուր կապի, բարեկամության և փոխադարձ համակրանքի մարմնացում, որոնք ավանդաբար ընկած են Ճապոնիա-Հայաստան հարաբերությունների հիմքում:

Իր հերթին, Իջևան քաղաքի քաղաքապետ Արթուր Ճաղարյանը շնորհակալություն հայտնեց Ճապոնիայի կառավարությանը և Հայկական կարմիր խաչի ընկերություն ՋԿ-ին՝ համայնքի անմիջական կարիքներին արձագանքելու և աջակցություն ցուցաբերելու համար:



Դեսպան Ֆուկուշիմայի շնորհավորական ուղերձը



Իջևան քաղաքի քաղաքապետի պաշտոնակատար Արթուր Ճաղարյանի շնորհավորական ուղերձը



Աղբատար բեռնատարը և աղբարկղերը՝ տրամադրված ծրագրի շրջանակներում



Ձախից՝ պարոն Ճաղարյանը, դեսպան Ֆուկուշիման, տիկին Եղիազարյանը և պարոն Ղալումյանը